ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՔՍԱՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ՏԻՐԱԽՆԱՄ ԹԵՄՆ, ՈՐ Ի ԿԱՆԱԴԱ

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Միածնաէջ Մայր Աթոռից գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհաւորանքներն ենք յղում Ձեզ, սիրելի Սրբազան, եւ Կանադայի հայոց թեմի հոգեւոր դասին, թեմական ու համայնքային վարչութեանց պատուարժան անդամներին եւ բարեպաշտ մեր զաւակներին՝ թեմի հիմնադրման 20-րդ տարեդարձի առիթով:

Մեծապէս ուրախ է Հայրապետիս հոգին, քանզի միայն դրուատանքի ջերմ խօսքեր ունենք յղելու Ձեզ եւ Կանադայում բնակութիւն հաստատած Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հարազատ զաւակներին:

Քաղցր յիշողութիւններ են վերարթնանում այս պահին Մեր հոգում Տիրախնամ Ձեր թեմ 2001 թուականին, Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեակի յոբելեանական տարում կատարած Հովուապետական Մեր անդրանիկ այցելութիւնից, երբ առիթն ունեցանք լինելու գրեթէ բոլոր համայնքներում՝ Մոնրէալում, Թորոնթոյում, Վանքուվրում, Սենթ Քեթրինզում, մայրաքաղաք Օթթավայում, եւ աղօթելու Ձեզ հետ հոգեւոր կեանքի անսպառ ակունք մեր եկեղեցիներում: Գոհունակ սրտով փառաբանեցինք Աստծուն՝ ականատես լինելով, որ Դուք համախմբուած էք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքոյ, հաւատարիմ ազգային մեր աւանդութիւններին, մեսրոպատառ սրբազան լեզուին, «Աստուածակերտ Աթոռ» Սուրբ Էջմիածնին ու հայրենի մեր Երկրին: Յատկապէս մխիթարութիւն էր Մեզ համար լինել թեմում գործող ազգային դպրոցներում եւ ականատես դառնալ երիտասարդ հայորդիների հայեցի կրթութեան ու դաստիարակութեան եւ հայապահպանութեան սրբազան գործում կանադահայոց նախանձախնդրութեանը: Կանադահայ մեր բազմաթիւ զաւակների՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու հարազատ ժողովրդին մատուցած ծառայութեանց համար արժանացրել ենք մեր Եկեղեցու բարձր պարգեւների, որպէսզի նոր եռանդով ու խանդավառութեամբ շարունակեն իրենց բարի աւանդը բերել ազգային-եկեղեցական մեր կեանքում:

Հայրապետիս համար անհուն ուրախութիւն է բարի վկայութիւններ լսել թեմական նորընտիր առաջնորդ, Մայր Աթոռիս երիտասարդ միաբան Գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանեանի արդիւնաւոր ծառայութեան մասին: Լիայոյս ենք, որ շնորհիւ Սրբազան Հոր նախանձախնդիր ջանքերի, առաւել պիտի շէնանայ ու պայծառանայ Կանադահայոց Տիրախնամ թեմը, եւ Մենք Մեր յաջորդ այցելութեան ընթացքին ականատես պիտի

լինենք ազգային եւ եկեղեցական կեանքում արձանագրուած նոր ձեռքբերումներին ու յաջողութիւններին:

Հայրական օրհնութիւն Ձեզ, հաւատաւոր հայորդիք Կանադայի: Ամուր մնացէք Ձեր հաւատքի մէջ եւ շարունակեցէք ապրել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, Տիրախնամ Ձեր թեմի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառութեան, անկախ մեր Հայրենիքի շինութեան եւ ազգային մեր իղձերի իրականացման նախանձախնդրութեամբ:

Հայրապետիս ի խորոց սրտի հայցն է առ Աստուած, որ Ամենակալ Տէրը միշտ հաստատուն պահի Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ անսասան՝ Տիրախնամ թեմը Կանադայի՝ իր բարեպաշտ ժողովրդով ու եկեղեցիներով:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 24-ն Սեպտեմբերի
Յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 484